

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Շր. 5 Սեպտ. — Է. օր Վերափ.: Ս. Պատարագր մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգը. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան:

● Կիր. 6 Սեպտ. — Ը. օր Վերափ.: Ս. Պատարագր մատուցուեցաւ ի Ս. Եարուժիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր հիւրարար Ս. Աթոռ գտնուող Արժ. Տ. Վարագ քննչ. Աւագեան:

● Բշ. 7 Սեպտ. — Նախատունակին ի Ս. Եարուժիւն նախագահեց Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.: Ս.

● Գշ. 8 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Աննայի: Ս. Պատարագր մատուցուեցաւ Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովակիմ Գեթեմանի վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեառնը՝ Հոգը. Տ. Սամուէլ Արդ. Աղոյեան: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց ժամօրհնող Հոգը. Տ. Յովակիմ վրդ. Մամուր:

● Շր. 12 Սեպտ. — Նախատունակին ի Ս. Եարուժիւն նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս.:

● Կիր. 13 Սեպտ. — Կիւս Գօ լոյ Ս. Աստուածածնայ: Ս. Պատարագր մատուցուեցաւ Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գեթեմանի վրայ: Ժամարարն էր Հոգը. Տ. Դանիէլ Արդ. Շամլեան: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան:

● Կիր. 20 Սեպտ. — Բաբելոնացի Ս. Խաչիկ վանդ: Ս. Պատարագր մատուցուեցաւ ի Ս. Եարուժիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգը. Տ. Ներսէս վրդ. Բապուեան:

— Նախատունակին ի Ս. Եարուժիւն նախագահեց Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.:

● Բշ. 21 Սեպտ. — Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն ժամը 8ին, Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթեմանի ձորը ու շէրաշափառով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գեթեմանի վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագր մատուցեց Գերշ. Լուսարարագետ Սրբազանը:

● Շր. 26 Սեպտ. — Խաչիկացի մեծահանգէս նախատունակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. ի, որ ապա Ս. Խաչիկայտի մասունքը Ս. Գլխաղբի մատուէն թափօրով փոխադրեց Աւագ Սեպտին:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեօցէ»-ի եւ Հսկման կարգեր: Եւանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.:

● Կիր. 27 Սեպտ. — Տօն ՎԵՐԱՅՄԱՆ ՍՐԵՑ ԽԱՅԻՆ: Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագր Մայր Տաճարի Աւագ Սեպտին վրայ եւ քարոզեց, բնարան ունենալով Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, եւ ես՝ աշխարհի (Պաղտ. 2. 14): Քարոզն ու Ս. Պատարագի առաջին մասը ձայնաւորուեցան Յորդանանի ռատիօկայանէն (Քարոզը լոյս տեսած է «Սրտն»-ի այս թիւով, էջ 277): Ս. Պատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն, աղօթիս եւ Ս. Աթոռոյս բարերար Մեղգանեան եղբարց հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպս. ի:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Խաչիկացի մեծահանգէս Անգաւտանը, հանդիսապետութեամբ Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. ի:

● Բշ. 28 Սեպտ. — Յիւստակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մասրան մէջ պատարագեց Արժ. Տ. Կարապետ քննչ. Անդրէասեան: Ապա կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ եկեղեցւոյ մէջ եւ ապա դուրսէն՝ Երջանկայիշատակ Տ. Կիւրեղ Պատրիարքի չիւմին վրայ, նախագահութեամբ Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. ի, որմէ ետք, Հոգը. Տ. Դէորդ վրդ. ի գլխաւորութեամբ, թափօր մեկնեցաւ Չամ-Թաղի հասարակաց գերեզմանավայրը, անդ եւս կատարելու համար նոյն արարողութիւնը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Գշ. 1 Սեպտ. — Առաւօտուն, Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի 1964-1965 դպրոցական տարեշրջանին:

● Գշ. 2 Սեպտ. — Ֆրանսայէն, Արժ. Տ. Վարագ քննչ. Աւագեան հիւրարար ժամանեց Ս. Աթոռ եւ յերադարձաւ երկու շաբթ ետք:

● Գշ. 9 Սեպտ. — Ս. Ուխտիս երրորդարդ Միաբաններէն Հոգը. Տ. Ներսէս վրդ. Բապուեան, որ չորս տարիներէ ի վեր կ'ուսանէր նախ Պեղնիքայի եւ ապա Փարիզի մէջ, ժամանեց Ս. Աթոռ:

● Եշ. 17 Սեպտ. — Առաւօտուն, Լուսարարագետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառնգ վարժարանի եւ Բնձայարանի 1964-1965 դպրոցական տարեշրջանին:

